



**Լ**ԱՕԳԷԼ ԾԱՌԱՅ ՅԻ ՔԻ ՈՂՈՐՄՈՒԴԵԱՄԲԸ ԱՅ ԵՒ ԿԱՍՕՔԸ ԱՕԳԻՍ. ԵՂԻՍԿՈՂՈՍԱԴԵՏ ԵՒ ԿԱՌՈՂԻԿՈՍ ԱՄԵԼԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿԻ ՀԱՄԱՕԳԻԱԿԱԼ ՆԱԽԱԵՇՈՒՐ ԱՐՈՒՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱԼ ԱՈՒԲԵԼԿԿԱԼ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՃՈՑ ՍՐԲՈՑ ԿԱՌՈՂԻԿԷ ԷԶՄԻԱՇՈՒՐ

ԲՐԻՍՏՈՍԱԻԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍԸՐ-  
 ԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷՒ ԱՐԿԵՊԻՍԿՈՊՈ-  
 ՍԻՆ ԵՒ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ԱՍՏՈՒԱՅԱՍԻՐ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին յոյժ երջանիկ է որ նաև մեր օրերուն Չեք Պատրիարքական Աթոռը, հաւատարիմ իր բազմադարեան աւանդութեան, կը շարունակէ իր հոգևոր, կրթական եւ մշակութային առաքելութիւնը մեր Մայր Եկեղեցւոյ եւ համայն մեր հաւատացեալ ժողովուրդի ծառայութեան նուիրական ճամբուն վրայ, մշտանորոյ ներշնչումներով եւ յիշատակութեան արժանի իրադարձումներով:

Չեք Առաքելական Սուրբ Աթոռին պատիւ բերող իրադարձումներէն մէկը կը հանդիսանայ Ս. Թարգմանչաց կրթական հաստատութիւնը, որուն երկրորդական վարժարանի հաստատումը, այս տարի կը բաւորէ իր գործունէութեան քսանամեակը: Յորեկնական այս սոնարմբումի սեմին, սիրոյ ողջունիւ Մեր խնդակցութիւնը կը յայտնենք Չեք Ամենապատուութեան, Սըրբոց Յակոբեանց զինուորեայ միաբանութեան եւ յատկապէս վարժարանի անխոնջ ահաւոչ հոգեշնորհ Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գարիկեանին, որ երկար տարիներէ ի վեր կը ղեկավարէ Սըրբոց Թարգմանչաց վարժարանը, մանկավարժական ձեռնհասութեամբ եւ հոգեղէն նուիրումով: Այս ուրախ առիթով, Մեր ող-

ջոյնը եւ օրհնութիւնը կը յղենք նաեւ վարժարանիդ բարեջան դասախօսներուն եւ սիրասուն աշակերտներուն, մաղթելով որ Տէրը միշտ օգնական մնայ ամենուն եւ առատապէս բաշխէ Իր երկնաօք շնորհները :

Թող Աստուած յաւիտ անսասան եւ յաւիտ ծաղկեայ պահէ Առաքելական Սուրբ Աթոռը Հայոց երուսողէմի եւ Սրբոց Թարգմանչաց կրթական Հաստատութիւնը, ի փաստ Հայաստանեայց եկեղեցւոյ եւ ի մխիթարութիւն քրիստոսասէր մեր ժողովրդեան :

Թող Աստուած Ձեզի, սիրեցեայ Սրբազան եղբայր, բաջտօղջ պահպանէ կենաց երկար տարիներով, որպէսզի շարունակէք Ձեր նուիրական առաքելութիւնը, Ձեզի յատուկ խմաստութեամբ եւ հոգեւոր կորովով :

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելույ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հօգւոյն Սրբոյ» (Հնամ. ԺԵ. 13) . ամէն :

Վ Ա Ջ Գ Է Ն Ա

ՆԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 14-ն Մայիսի

1973 Փրկչական ամի,

եւ ի տուժարիս Հայոց ՌՆԻԲ

ի մայրաքաղաք Սրբոյ Էջմիածնի :

Հմբ. 751